

զան Պօղոս Եպիսկոպոսին, որ այսպէս վարժեց զմեր ժողովուրդն յառատաձեռնութիւն և ի գործ, Հազար շնորհակալութիւն և ժողովրդական լրութեան, որ այսքան զոհողութիւններ յանձն էառ, Առ այժմ այսչափ, մինչև ցաւարտումն մեր ամբողջ հաշւոյ, զոր հրատարակելու եմք ի հարկէ մանրամասնաբար, Ընդունեցէք . . . Խմբագիր մեր երախտագիտական յարգանաց հաւաստին:

Արարք Ս. Եկեղեցւոյ շինութեան Դործ. ժողով.

(Կնէ+)

24 Նոյ. 1883 Վան:

ԱՌ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՐՈՒԹԻՒՆ

ԱՐԱՐԲ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ.

Աստուածային յարկիս վերաշինութեան գործադիր ժողովը, պարտ անձին կը համարի հրապարակաւ յատենի Ս. Եկեղեցւոյս իւր սրտի զեղուն շնորհակալութիւն մատուցանել առ Մելիքեան Դեր. Տէր Պօղոս Սրբազան Եպիսկոպոսն, վասն այն մեծ և ծանր գործոյն, որ հարիւր տարիէն ի վեր ըղձակերտ կըլինէր համայն լրութիւնս ժողովրդեան տեսնելու և չէր յաջողեր:

Այն՝ որոյ վասն շատեր ի Տէր ննջելով իրենց կարօտակէզ աչերն փակեցին և չտեսան Աստուածային յարկիս այս վսեմութիւն և նորոգութիւնը:

Նախապէս յաւերժ կեցցէ՛ մեր Օգոստոսիառ Սուլթան Համիտ Վայսրն, որոյ օրով ազգերնիս առաւելապէս կրօնական աղատութիւն կը վայելէ:

Վերնահինամ Տեսչութիւն պահած էր այս Ս. Տան շինութեան գործը Դեր. Սրբազանիս, որ Սողոմոնեան տաճարի նորոգիչ Զօրաբարելի հոգով օծեալ, ժողովրդեան ձայնին ունկն մատոյց, ձեռք զարկաւ Աստուածային Տանս վերաշինութեան, և այն որ քանի տարի յառաջ միայն հինգ կանգուն ընդարձակելու համար հարիւրաւոր ոսկիներ տալու յօժարութիւն կար, շնորհիւ Սրբազանիս հինգ կանգունի տեղ՝ տասնուհինգ ի լայնութիւն և 115 կանգուն յերկայնութիւն ընդարձակեցաւ ի հարաւ:

Մօտ հազար մեծ ծառեր կտրել տուաւ յԱյգեփատանու, անձամբ շրջակայելով՝ մօտ քսան հազար մարգակ և ծառ բերել տուաւ իւր ազգեցիկ ստորագրութեամբ ի Գաւաշու և ի Վարձկանից:

Ընդհանուր հանգանակութիւն գրելու համար թաղ առ թաղ և համարեա թէ տուն առ տուն շրջագայեց, նաւաւարներ իրենց նաւերով՝ բեռնակիր անասուն ունեցողք՝ թէ քաղաքացի և թէ գիւղացի մինչև անգամ և քիւրդեր իրենց անասուններով հարկեցոյց և ստիպեց որ օգնութեան հասնեն Արարք Եկեղեցւոյ շինման, Արհեստաւորք, ճարտարապետք, հիւսն, որմնագիր, երկաթագործ, քարահատ, սարակ և այլք՝ Նորին Սրբաշնութեան յորդորիչ ձայնէն ստիպուելով փութացին իրենց բաժին ընկած ծառայութիւնը մատուցանել Աստուծոյ տանս:

Նայեց որ գործն ասով ևս չի բաւականանար, զի դրամական տագնապ կալ, իւր ձայնը մինչ ի Ա. Պօլիս բարձրացոյց առ Ազգային Պատրիարքարան, որուն համար հոգեւոր Ս. Ներսէս Սրբազան Պատրիարքն յատենի ժողովրդեան կաղաղակէր մի իննայէք սիրելի ժողովուրդ, օգնութեան հասէք, վասն զի մեր հայրենի հողոյն վերայ Աստուածային տուն կը շինուի մեր օրով:

Եւ որ տւելի դժուարինն էր և անյուսալի ի յաջողել, ազդեցիկ միջոցաւ յաջողեց որ արեւմտեան կողմի պարիսպն 150 կանգուն տարածութեամբ սոյն միջոցիս մէջ շրջապտոյտ բարձրացաւ և աւարտեցաւ, որուն ծոց կարող պիտի լինի եկեղեցին պէտք եղած շէնքեր կառուցանել յապալս: Ուրեմն այսքան բարեաց պատճառ եղողը մի բարձր անձնաւորութեան ինչ բարձր շնորհակալութիւն մատուցանելու է, մենք կը տկարանանք, միայն թէ Տաճարի Տէր, անդրանկաց եկեղեցւոյ թագաւորն Քրիստոս, ինք լինի Նորին Սրբազնութեան վարձահատոյց:

Ապա ի ցոյց երախտագիտութեան թող պարծանօք կրէ Ս. Եկեղեցիս իւր բարձր ճակատին վերայ թէ՛

« Ի փառս միոյն Աստուծոյ վերականուցաւ Արարուց Ս. Եկեղեցիս և շրջապատ պարսպաւ ընդարձակեցաւ անխոնջ ջանիւք Լիմ անապատի վանահայր և Առաջ. Տեղ. Ս. Պօղոս Եպիսկոպոսի Մելիքեանց արդեամբ ժողովրդեանն »:

Գործ. Ժող. Արարք Եկեղեցւոյ

Արեւմտեայ

Արեւմտեայ

Նախագահ

10 Նոյ. 1885 ՅԱՐԱՐԵ Ի Վ.Ա.Ն.

ԽՏԻՆԱԳՐՈՒՄ ԵՒ ԱՐԱՐԱՏ ԽՈՒՄԱՐԻ:

Վիճակիս եկեղեցական դասուց մեծագոյն մասի աղքատութիւնը և նոցա ընտանեաց ապագայում կրելու աննախանձելի վիճակն ունելով ինկատի՝ վստահանումս առաջարկել կարգակից եղբարցս, որ համաձայնեն ինձ հետ՝ առաջակայ 1886 թուականը, մեր զաւակաց վիճակն ապահովելու առաջին տարեկիցըն համարել, պարտաւորուելով հետզհետէ ամեն միսս մեզնից տարուայ ընթացքում ոչ պակաս տասն թուրլուց և ոչ տւելի 25 թուրլուց հասուցանել դորա համար յատկացեալ մի տեղ դանձելու, որը կարող է ապագայում ծառայել մեր ընտանեաց և զաւակաց օգտին (շահն), Կցանկայի, որ այս իմ անշօր ձայնը առաւել բացայայտ և հարուստ եղանակաւ հրատարակուի Արարատ ամսագրոյ էջերում, և եթէ հաճելի երևայ վիճակիս հոգևորականներին, սկսեալ քահանաներից մինչև զպիրներն անխտիր հաճէին իւրեանց կամքն յայտնել երկու տողով՝ պատուական լրագրութեանց միջոցով, որ մեր ամենիս խնամակալ ծայրագոյն Հայրապետը՝ լսելով մեր անյօգ ձայնը՝ ինքն ևս կը արեհաճի անշուշտ ուղղութիւն տալով ներկայ խնդրոյն տնօրինել զարժանն յօգուտ այժմեան և ապագայ որրոց և այրեաց եկեղեցականացս: Յայտնելով այժմէն իմ պատրաստականութիւնը աղօթումս, որ իրագործուի նուաստիս առաջարկութիւնը:

Ստեփաննոս Ժամանայ Կապուկէանց:

Ի 22 Դեկտեմ. 1885 թ.

Ախթալայի Կապուկէանց: